ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 133 - Ա

«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ԵՎ «ՎԱՅՔԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2026 թվականի փետրվարի 5-ի թիվ 2 որոշմամբ հաստատված թիվ 5 հավելվածի «Առողջության ապահովման և բարելավման ծրագրի և առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակներում արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների որոշ կատեգորիաների աշխատողների վարձատրման» ուղեցույցի 6-րդ կետը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. «Եղեգնաձորի պոլիկլինիկա» և «Վայքի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերություններում իրականացվող առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում ծառայությունից ստացվող հասույթի մեկ տոկոսը հատկացնել տնօրեններին՝ որպես լրավճար:
2. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2026 թվականի մայիսի 1-ից ծագող իրավահարաբերությունների վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2026-05-26 11:21:41 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Վ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

2026 թվական մայիսի 26

ք.Եղեգնաձոր